ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ.՝ (226) 43434, Էլ. փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

N 1362
20 հունիս 2024թ.

«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ԽԱԼԱԹՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խալաթյան,

2024 թվականի մայիսի 29-ին Չարենցավանի համայնքապետարանի և «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է Չարենցավան համայնքի գյուղական բնակավայրերի լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ «ՉՀ-ԲՄԽԾՁԲ-2024/5» գնման պայմանագիր:

Սույն թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության թիվ Ե/1286-24 գրությամբ Չարենցավանի համայնքապետարանը ծանուցվել է «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» և «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների փոխկապակցվածության մասին, մասնավորապես. «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արման Հայրապետի Խալաթյանի և «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, և ընկերության տնօրեն Արման Հայրապետի Խալաթյանը 2020 թվականի դեկտեմբերի 01-ից մինչև օրս հանդիսանում է նաև «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն և բաժնետեր: Գրությամբ ծանուցվել է նաև, որ «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2022 թվականի հունիսի 22-ից մինչև 2024 թվականի հունիսի 22-ը (17.12.2022թ.-11.05.2023թ. հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԵԴ/32833/02/22 որոշման հիման վրա) ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:Բացի այդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝

«...Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:...»:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 121-րդ կետի համաձայն՝ «...121. Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:...»: Տվյալ դեպքում «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մասնակցության հայտ ներկայացնելով «ՀՀ-ԲՄԽԾՁԲ-2024/5» ծածկագրով գնման ընթացակարգին, ներկայացրել է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, որով հայտնել և հավաստել է, որ ընկերությունը և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Առաջնորդվելով կնքված Պայմանագրի 7.3-րդ կետով. «...Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:...» և հաշվի առնելով այն փաստը, որ Պայմանագրի շրջանակներում որևէ չափաբաժնի մասով ծառայություն չի մատուցվել՝ Չարենցավանի համայնքապետարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է 2024 թվականի մայիսի 29-ին «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված Չարենցավան համայնքի գյուղական բնակավայրերի լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ «ՀՀ-ԲՄԽԾՁԲ-2024/5» գնման պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Կատ. համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական՝ Վ. Չիլինգարյան